Այդ երեկոյ բոլոր տները փոխինդ են ուտում։ Այդ պատրաստում են բոված և երկանքով ալացած ցորենի ալիւրից, որը շիրայով են շաղախում։ Փոխնդի ալիւրից մի քիչ ամանով դնում են իրենց տան ալիւրի փեթակների վրայ, որպէսզի Ս. Սարգիսը գիշերը ձիով անցնի փոխինդի վրայով, որ տներում «բարաքեաթ» լինի։ Այնուհետև, Շաբաթ առաւօտեան բոլորը գնում են եկեղեցի, ուր պատարագից յետոյ հաղորդւում և ապա տուն վերադառնալով՝ ուտում են մատաղի մսից պատրաստուած հարիսէն։ Ահա այսպէս է տօնւում Ս. Սարգիսը։

Ս. Վարդանանց տօնը։ Պատմական այս տօնը գիւղերում չի տօնւում։

Բարեկենդան։ Բարեկենդանի ամբողջ շաբաթը, նամանաւանդ վերջին երեք օրը միմեանց մօտ հաւաքւելով թէ շատ ուրախ անցկացնում, զւարճանում են և թէ լաւ և իւղալից կերակուրներ են ուտում։ բացի այդ, գիւղացի կըտրիճները դուրս են գալիս դաշտը ձիարշաւ և այլ խաղեր են սարքում։

Ընդհանրապէս հարսանիքներից շատերը բարեկենդանին են կատարւում։

Մեծ պաս։ Մեծ պասին Փէրիացիք ասում են «Աղուհաց»։ Պաս բռնելու և առհասարակ միմեանց այցելելու և «Աղուհաց»-ը շնորհաւորելու սովորութիւնը գիւղերում դեռ կատարւում է բոլոր ճշտութեամբ։ Գիւղացիք այդ օրը հաւաքւում են միմեանց տուն, շնորհաւորում «Աղուհաց»-ը, ուտում, խմում, քէֆ անում, պասն սկսելով ու «Լուացարուք — սրբացարուք»-ի հանդէսը կատարելով։

Ընդհանրապէս պասի Երկուշաբթի առաւօտեան վաղ՝ գիշերազանգին հարսները վեր են կենում և կուժն ուսելով շտապում են դէպի աղբիւրը կամ գետը ջուր բերելու, որպէսզի տանը «բարաքեաթ» լինի և այդ տարւայ հունձքն առատ լինի։ Իսկ նոյն օրը ջահել հարսներն ու աղջիկները համախմբւում են աղբիւրի շուրջ և այնտեղ միմեանց շնորհաւորում պասը.—